ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 479-Ա

14 օգոստոսի 2026 թ.

ԱՆԱՀԻՏ ԱՄԻՐԱՂՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 24-ի N 854 արձանագրությունը (2026 թվականի օգոստոսի 10-ի Ն/2955-2026)

որոշում եմ՝

1. Անահիտ Ամիրաղյանին 2026 թվականի օգոստոսի 14-ից ազատել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումից:

2. Անահիտ Ամիրաղյանի համար «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարման վերջին աշխատանքային օր համարել 2026 թվականի օգոստոսի 14-ը:

14.08.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108405

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ